№ 122 Յուլիսի 16 (28) 1880 Յուլիսի 16 (28) № 122

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՇԱԿԻ» կէս տարվայ բաժանորդագրութիւնը ընդունվում է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը: Գինը 6 րուբլի: Բաժանորդագրութիւնը ընդունվում է և մի ամսով: Գինը 1 րուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային լեզու դատարաններում.— Ներքին տեսութիւն· Մեր դպրոցները· Նամակ Ալէքսանդրապօլից· Նամակ Հին-Նախիջևանից· Նամակ Համամլուից· Նամակ Խմբագրին· Նամակ Խմբագրին· Նամակ Խմբագրին· Ներքին լուրեր·—Արտաքին տեսութիւն· Հայր Օրմանեանի ընդունելութիւնը· Նամակ Թիւրքիայից· Նամակ Աւստրիայից·—Յայտարարութիւններ·—Բանասիրական· Թիւրքիայի հայ կաթօլիկ համայնքը·

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Յայտնի է որ ռուսաց ահագին պետութիւնը բաղկացած է անթիւ ազգութիւններից, որոնցից շատերը դժուարութեամբ են գործածում պետական լեզուն: Բալտեան նահանգների գերմանական և ֆիննական ամբոխը, Լեհական ամբոխը, Մալօրոսիայի ազգաբնակութեան մեծամասնութիւնը, Անդրկովկասի հայ, թուրք և վրացի ամբոխը դժուարութեամբ են հասկանում, իսկ շատ անգամ բոլորովին չեն իմանում պետական ռուսաց լեզուն:

Գործ ունենալով արքունի դատարաններում զանազան ազգութիւններին պատկանող ռուս հրպատակները ստիպված էին լինում խնդիրքներ տալ դատաւորներին և բացատրել իրանց մտքերը դատարանի առջև ռուսերէն լեզուով: Բայց չը տիրապետելով այդ լեզուն այլազգի ամբոխը ստիպված էր դիմել վարձկան ադվոկատներին, թարգմանիչներին և խնդիրք կազմողներին, որոնք շատ անգամ ի չար էին գործ ածում խնդրատուների հաւատարմութիւնը և նիւթապէս հարստահարում էին նրանց:

Դորանից վնասվում է և անաչառ արդարադատութիւնը, որ անկարող է մտնել խնդրատուի հետ անմիջական յարաբերութեան մէջ:

Երևի այլազգի հպատակ ամբոխի այդ տեսակ ծանր, մինչև անգամ անտանելի դրութիւնը աչքի առաջն ունելով, բարձրագոյն կառավարութիւնը վճռել է այժմ, ինչպէս հաղորդում են մեզ մայրաքաղաքի ռուս լրագիրները, թոյլ տալ որ Բալտեան նահանգներում և Լեհաստանում դատարաններին ներկայացվող խնդիրները, կարողանան գրված լինել և տեղական լեզուներով: Լեհաստանում խնդիրքները կարող են գրված լինել լեհական լեզուով, իսկ Բալտեան նահանգներում գերմանական և այլ տեղական լեզուներով:

Կառավարութեան այդ խելացի կարգադրութեանը համակրում է ի հարկէ ռուսաց ամբողջ մամուլը և տեսնում է ներկայ փառաւոր թագաւորութեան այդ նոր կարգադրութեան մէջ մի գրաւական Ռուսաստանի դատաստանական պրակտիկայի աւելի կանոնաւոր զարգացման, մի գրաւական արդարադատութեան պայծառ ապագայի մեր ընդարձակ պետութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Սկսեալ այն օրից, երբ մեր ազգային ուսումնարանների տեսչութեան իրաւունքը տըրվեցաւ երիտասարդութեան ձեռքը, երբ ազգային դաստիարակութեան գործը ընդունվեցաւ որպէս միակ քայլ դէպի յառաջդիմութիւն, սկսեալ այդ օրից, մեր ուսումնարանների կազմակերպութիւնը բաւական նշանաւոր կերպիւ փոխվեցաւ և բարելաւացաւ: Այդ վերանորոգութիւնները կատարվեցան ժամանակի պահանջմանց համաձայն, որովհետև ժամանակը պահանջում էր ազգային ուսումնարաններից ոչ թէ տիրացուների և խալիֆաների խումբեր, այլ լաւ քաղաքացիներ և ազգութեան լաւ անդամներ:

Այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր էր, որ ազգային դաստիարակութիւնը ընդհանրացած լինէր մեր ժողովրդի բոլոր դասերի մէջ, և դաստիարակութեան սկզբունքը ծառայէր այն նպատակին, որով կարելի լինէր մեր ազգութեան պատկանող անհատների մէջ գաղափարների և ձգտումների միութիւն ներշնչել: Բայց երբ դաստիարակութեան եղանակը և նպատակը չեն համապատասխանում մեր ընդհանուր շահերին և պահանջին, երբ լուսաւորութիւնը չէ դառնում հասարակաց, և երբ կրթութեան ուղղութիւնը դէպի մի որոշեալ նպատակ չէ առաջնորդում, այն ժամանակ կրթութիւնը հազիւ թէ կարող է ցանկալի հետևանք ունենալ:

Իսկ երբ մեր ազգի անջատված խումբերը և կրօնի պատճառով առանձնացած կուսակցութիւնները կրթութեան մէջ ընթանում են զուգընթաց կերպով, երբ դաստիարակութեան եղանակը դառնում է ազգային և ոչ կրօնական, այն ժամանակ կարելի է յուսալ, որ ազգութեան գաղափարը ընդհանրացած կը լինի ազգի բոլոր մասնատված անդամների մէջ: Այդ տեսակէտից նայելով, մեր Կովկասի և Անդրկովկասի ազգային ուսումնարանները միակողմանի պէտք է համարել մեր ընդհանուր կրթութեան վերաբերութեամբ: Սրա հետևանքը լինում է այն, որ մեր ազգութեան մի մասը, լուսաւորչականները, կանոնաւոր կերպիւ առաջանում են, մտաւորապէս զարգանում են, իսկ միւս մասը՝ հայ-աւետարանականները և հայ-կաթօլիկները բոլորովին մնում են խաւարի և տգիտութեան մէջ: Օրինակ, Կովկասում և Անդրկովկասում, հայ-լուսաւորչականները իրանց բարձր հոգևոր կառավարութեան հովանաւորութեան ներքոյ ունեն բաւական բարեկարգ երկսեռ դպրոցներ, ունեն բաւական զարգացած թեմական տեսուչներ և ուսուցիչներ, որի հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՕԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ

Վերջին քաղաքական լուրերից երևում է, որ հայկական խնդիրը եւրոպական դիպլոմատիայի բարձր շրջաններում դարձեալ հետաքրքրութեան առարկայ է դարձել· Բերլինի դաշնագրի անկատար մնացած կէտերը, և նրանցից առաջ եկած անբաւականութիւնները ստիպեցին եւրոպական պետութիւններին միաբան պահանջել Բ. Դըռնից, որ նա ի միջի այլոց, 61-րդ յօդուածի համեմատ, կատարէ իր խոստացած վերանորոգութիւնները Հայաստանում· Բայց Բ. Դուռը, որպէս միշտ, նոյնպէս և այժմ նպատակ ունի գոհացնել Եւրոպային միայն դատարկ խոստումներով, և իր խոստմունքները այնքան ժամանակ յետաձգել, մինչև Հայաստանում ոչ հայ կը մնայ և ոչ էլ նրանց մասին մտածելու հոգս·

Հայկական խնդիրը այժմ մի մազից է կախված, կամ կը վճռվի նա յօգուտ հայերի, և կամ յաւիտենական կորստին կը դատապարտէ հայերին· Մի այսպիսի ճգնաժամի ժամանակ հարկաւոր է ազգի միահամուռ աշխատութիւն, հարկաւոր է մեր ժողովրդի ներկայացուցիչների միաբան գործունէութիւն· Բայց ցաւալի է տեսնել, որ Տաճկաստանում մեր ազգի ներկայացուցիչները, թէ կաթօլիկ, թէ բողոքական և թէ լուսաւորչական՝ համամիտ, համախոհ և միաբան չեն գործում· Մենք նպատակ չունենք այժմ խօսել մեր կրօնական կուսակցութիւնների սառն յարաբերութեան և մեր մի քանի դաւաճան առաջնորդների վնասակար քաղաքականութեան մասին,—միայն այսքանը կասենք, որ հայ ազգը այդպիսիների շնորհիւ այնքան տառապանքներ կրեց, այնքան ապտակներ կերաւ, որ գոնէ այժմ նա պէտք է խելքի գայ, պէտք է հեռանայ այդ հրէշներից, որոնք կրօնի և Յիսուս Քրիստոսի անունով, (որը սիրոյ և եղբայրութեան Աստուածն է) պառակտում են ազգը և նրա մէջ ատելութիւն և թշնամութեան որոմն են սերմանում·

Այն օրից, որ ծագել է հայկական խնդիրը, մենք տեսնում ենք, որ այդ խնդրի վերաբերեալ բոլոր հոգսերը, բոլոր աշխատութիւնները ծանրացել են Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի վրա, որին, որպէս տաճկաց կառավարութիւնը, նոյնպէս և եւրոպական մեծ պետութիւնները ճանաչում են որպէս միակ ներկայացուցիչ հայ ազգի· իսկ հայ-կաթօլիկ համայնքը ի՞նչպէս է գործում և ի՞նչքան է նպաստում հայ-լուսաւորչականների այժմեան ազգային շարժմանը,—ահա մի հարց, որ մեզ շատ հետաքրքրում է· Մենք, հայ-կաթօլիկներս ցաւում ենք, և մինչև անգամ ամաչում ենք, որ մի ուրախալի երևոյթ չը պիտի կարողանանք ցոյց տալ· Մի այնպիսի րոպէում, երբ հասել էր Հայաստանի ճգնաժամը, երբ պիտի լուծվէր նրա կենաց և մահուան խնդիրը, երբ նրա դարևոր վէրքերը կամ պիտի բժշկվէին և կամ աւելի պիտի սաստկանային,—մի այսպիսի օրհասական րոպէում հայ-կաթօլիկ համայնքը նայում էր գործի վրա կատարեալ սառնասրտութեամբ·

Անցեալ պատերազմի ժամանակ, երբ Տաճկաստանի հայը սթափվեց իր դարևոր քնից, երբ ըզգաց իր թշուառ դրութիւնը, երբ ճանաչեց իր իրաւունքները և ներկայի պահանջը,—այդ ժամանակ նա մեր վէրքերը բաց արեց Եւրոպայի առջև և սկսեց կարեկցութիւն խնդրել· Մի և նոյն ժամանակում հայ ազգի մի մասը, հայ—կաթօլիկ համայնքը, մնաց անտարբերութեան մէջ· Մենք կարմրելով յիշում ենք, որ Բերլինի վեհաժողովի գումարման միջոցում, հայ—կաթօլիկները, փոխանակ իրանց հայ լուսաւորչական եղբայրների հետ միաբանվելու, և իրանց ազգային ցաւերի համար դարման խնդրելու,—հայ-կաթօլիկները այդ միջոցում թէ Կ. Պօլսի մէջ և թէ գաւառներում զբաղված էին խայտառակ կրօնական վիճաբանութիւններով, և Հասունի մասին էին մտածում…

Կաթօլիկ հոգևորականութեան վրա անկարելի է յոյս դնել, որովհետև նրա իդէալը Հռօմն է, իսկ նպատակը թիւրքաց անկարգ կառավարութեան պահպանութիւնը· Մեր յոյսը ազատամիտ հայ-կաթօլիկ երիտասարդութեան վրա է· Այժմ հայ-կաթօլիկ երիտասարդութիւնը, կատարեալ համոզմունքով և անկեղծ սրտով պէտք է բարձրացնէ ազգային միութեան դրօշը, որի արդիւնքը պէտք է լինի մեր ընդհանուր շահերի պաշտպանութիւն, հայութիւն և սէր· Բացի ազգային միութիւնից, ոչ մի ուրիշ միջոց չէ կարող փրկել Հայաստանը թիւրքերի բարբարոսութիւնից· Այդ միութիւնից միայն կը սարսափի Թիւրքիան· ժամանակ է, աշխատենք չը կորցնել թանգագին ժամանակը·—Գործելու և միասիրտ, միաբան գործելու ժամանակ է·

Թիւրքիան, որպէս միշտ, իր շահերը պահպանելու համար, չը պիտի դադարէ մեր և լուսաւորչականների մէջ խռովութիւններ ձգելու· Նա ոչ սակաւ երկպառակութիւններ սերմանեց նոյն իսկ մեր՝ կաթօլիկների մէջ· Այժմ, որպէս նշաններից երևում է, աշխատում է նա գաղտնի մատներով կրկին յուզել մոռացված հարցերը, որ ոչ սակաւ վնասներ պատճառեցին մեզ· Այդ պէտք է ի նկատի ունենան հայ-կաթօլիկները· Հայաստանը այժմ ողջունում է իր զաւակներին, բայց միայն ազգայնութեան դրօշի տակ ցանկանում է տեսնել նրանց· Նա խնդրում է զոհաբերութիւն և աշխատանք· Մեր ապագան կորած է, եթէ օգուտ չը քաղենք հանգամանքներից· Իսկ մեր վատ եկեղեցական առաջնորդները, որոնցից մէկը և ամենագլխաւորը, որ յայտնի է իր դաւաճան անցեալով և ներկայով, յաւիտենական նախատանքի դրօշմը կընդունէ իր ճակատի վրա անաչառ պատմութիւնից, որովհետև մեզ ձգեց Հռօմի ճանկերի մէջ…

Հայ-կաթօլիկ